


834.6:63(52.01)

Պրոլետարներ բոլոր յերկների, միացե՛ք

# ՆԱՄԱԿ ԸՆԿ. ԱՏՎԱԼԻՒՄԻՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ  
ԳԵՐՐԴԵՎՈԿ ՇՐՋԱՆԻ  
ՍՈՎԵՏՈԿԱՅԱ ՄՏԿ-Ի  
ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ  
ԿՈՎՏՆԵՍՈՒՀԻՆԵՐԻՑ



ԲՈԼԱՐ ԿՈԽՍՇՐՋԿՈՄՆԵՐԻՆ  
ՅԵՎ ՄՏԿ-Ի ՔԱՂԲԱՓԻՆԵՐԻՆ

Խոշոր նշանակություն տալով Հյուսիսային Կովկասի Գեորգեվսկի ռայոնի Սովետսկայա ՄՏԿ-ի գործունեյության շրջանի կոլտնտեսուհիների՝ ընկ. Ստալինին ուղղած նամակին, անհրաժեշտ ե այս նամակը մշակել բոլոր կուս. բջիջներում, կոլտնտեսականների, կոլտնտեսուհիների, մենատնտեսուհիների ժողովներում, լիկէայաններում և քաղղաքոցներում։ Կազմակերպել հատուկ քաղ-որեր այս հարցը կոլտնտեսականների և մենատնտեսների շրջանում մասսայականացնելու համար։

Նամակի մասսայականացման հիմնական նպատակը պետք ե լինի բարձրացնել կոլտնտեսուհիների, մենատնտեսուհիների արտադրական-քաղղաքական ակտիվությունը, լայն չափերով նրանց մասնակից դարձնել գարնանացանի նախապատրաստական աշխատանքներին։

Տեղերում գործը կազմակերպել այնպես, վորպեսզի կոլտնտեսությունների արտադրական բրիգանները կազմակերպելիս վոչ մի աշխատունակ կին դուրս չմնա այդ բրիգաններից և նրանց լայն հնարավորություն տրվի աշխատանք կատարելու գյուղատնտեսության բոլոր բնագավառներում։

Տասնյակ հարյուրափոր հարվածային կոլտնտեսուհիներ մեծ դեր խաղացին 1933թ. գյուղատնտեսության պլանների կատարման գործում. սակայն նրանց

Խորացի Վ. Արամասյան  
Թարգմանեց՝ Հ. Անդոնյան  
Մրացրի Ս. Տ-Միքոյան  
Հանձնված և պահպատճյան 15 դեկտեմբերի 1933 թ.  
Խորացրված և սպառչելու 23 դեկտեմբերի 1933 թ.  
Դաշտի 7796 (թ). Համա. № 158.  
Գումար 4000. Տիրու 49,000 ռա. 60.

Կուսական տպագործ. Շնուվան.

ղեկավար աշխատանքներում առաջբաշելու ինսդիրը  
չափազանց անբավարար ե: Անհրաժեշտ է, վորպես-  
զի տեղերում կուսշրջկոմները, ՄՏԿ-ի քաղբաժին-  
ները այս ուղղությամբ աշխատանք կատարեն ավելի  
լայն չափերով, ավելի վատահորեն առաջբաշել լավա-  
գույն հարփածային կոլտնտեսուհիներին—կուսակ-  
ցական, խորհրդային, կոլտնտեսային, կոռպերատիվ  
ղեկավար աշխատանքներում. ոգնել նրանց—ոժան-  
դակել, ստեղծել նրանց աշխատանքների համար ան-  
հրաժեշտ պայմաններ:

Այս նամակի մշակման ընթացքում անհրաժեշտ  
ե ուժեղացնել աշխատանքը տեղերում կանանց ան-  
գրագիտությունն իսպատ վերացնելու համար. տեղե-  
րում կազմակերպել կուլտ. արշավ՝ ընդգրկելու վողջ  
անգրագետ-կիսագրագետ կանանց լիկիայաններում,  
կիսագրագետների գաղոցներում. ընդգրկել նրանց  
շրջաններում կազմակերպված ազգո-զոռո-դասըն-  
թացներում, խմբակներում: Կոնկրետ միջոցառում-  
ներով բարելավել կոլտնտեսուհիների, մենատնտե-  
սուհիների կուլտուր-կենցաղային սպասարկման  
գործը: Կոլտնտեսային ակումբների, մանկամսուր-  
ների, մանկապարտեզների շենքերը վերանորոգել,  
կահագորել, տաքացնել, բարելավել սանիտարական  
գործքունը, պահպանել պահանջվող մաքրությունը:  
Լայնածավալ աշխատանք կատարել կոլտնտեսու-  
թյուններում ունենալու չոր, մաքուր, լուսավոր  
բնակարաններ, ստեղծելու կոլտնտեսականների և  
կոլտնտեսուհիների համար կուլտուրական բարե-  
կեցիկ կյանք:

Հայաստանի Կոմ. կուսակցության

Կենտրոնական կոմիտե:



11-266869/1

Մեր թԱ.ՆԳԱ.ԴԻՆ ԲԱՐԵԿԱՄ,  
ԸՆԿԵՐ ԱՏԱԼԻՆ

Մեր նամակի առաջին տողերում ուղղում ենք  
Ձեզ մեր խոնարհ բարեները, ինչպես նաև ջերմ վող-  
ջույն բոլշևիկյան կուսակցության վողջ կենտրո-  
նական կոմիտեյին:

Հաղորդում ենք Ձեզ, վոր մեր ՄՏԿ-ի տասնմեկ  
կոլտնտեսությունները բոլորն ել հաջողությամբ  
վերջացրին գաղտային աշխատանքները: Ժամանա-  
կին հնձեցինք և կարսեցինք հացը, կատարեցինք պե-  
տության հացահանձնումները և ՄՏԿ-ի ընալիճարը,  
վերջացրինք աշնանացանը պահանի գերակատարումով:  
Արդեն հաշվել ենք, թե ինչքան յեկամուտ ե ընկնում  
աշխորին, և որերս կձեռնարկենք հացահատիկը բա-  
ժանելու:

Այդ առթիվ յերեկ մեզ մոտ մեծ տոնախմբու-  
թյուն եր: Մենք ուրախ ու զվարի տոնեցինք կոլ-  
տնտեսական ազնիվ աշխատանքի ավարտումը, աշ-  
խատանք, վորի արդյունքները շատ լավ են: Ցեղ  
մենք, կանայք, մեր մեջ վորոշեցինք Ձեզ պրել մեր  
կոլտնտեսական վարք ու բարքից, առանձնապես  
մեր՝ կանանց վիճակից, թե ինչպես նա փոխվում ե  
բոլորի աջքի առաջ:

ԿԻՆԸ ԱՅՃՄ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ  
ԽՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄԱՐԴ Ե

Մենք մեր ժողովներում և զբույցներում քննել ենք Ձեր ճառը հարվածային կոլտնտեսականների համագումարում, վորտեղ Դուք խօսեցիք նաև մեր՝ կոլտնտեսուհիներիս մասին։ Դուք ասացիք, վոր կինը կոլտնտեսություններում մեծ ուժ ե, վոր կոլտնտեսությունները մեզ հնարավորություն են տվել հավասարվել տղամարդկանց և վոր մենք, կանայք, պետք ե պահպանենք կոլտնտեսությունները և ամուր կպչենք նրանցից։ Դա իսկ և իսկ ճշմարիտ ե։ Հենց այդպես ել ե։ Կոլտնտեսությունները մեզ ինքնուրույն մարդ են դարձրել իսկ մինչ այդ մենք լոկ կինարմատ եյինք։ Իզուր չեր, վոր մեզ կինարմատ եյին կոչում։ Մենք մեր ամբողջ կյանքում, ծնվելուց միչե մահը, կրկնակի հպատակության մեջ եյինք և սեփական ձայն չունեյինք։ Մենք տղամարդուց վոչ թե քիչ, այլ շատ եյինք աշխատում, իսկ տերը տղամարդն եր, վոչ թե կինը։ Տղամարդն իներ նեւման յեվ սոսկալի աղքատության մեջ եյինք և սեփական ձայն չունեյինք։ Մենք տղամարդուց վոչ թե քիչ, այլ շատ եյինք աշխատում, իսկ տերը տղամարդն եր, վոչ թե կինը։ Տղամարդն իներ նեւման յեվ սոսկալի աղքատության մեջ եր գտնվում, իսկ կինը կրկնապատիկ։ Բայց յեկազ իսկական կաներ նայեվ զյուղացի կնոջ համար։ Այդ կյանքը մեզ սիրե կոլտնտեսությունները։

Վերցնենք մի փոքր որինակ։ Առաջ գյուղում այսպիսի մի սովորություն կար. ծեծում եյին կանանց։ Քիչ գյուղացի կար, վոր իր կնոջը չեր ծեծում։ Հարրում ե, վորեւ դժբախտության և հանդիպում, կամ թե պարզապես բարկանում ե գյուղացին, և սկսում ե ծեծել կնոջը։ Կար գյուղացի, վոր կովին ափսոսում եր խփել, իսկ կնոջը ծեծում եր։

Նույնիսկ հեղափոխությունից հետո կանանց ծեծելը չգաղաքարեց գյուղում, թեև որենքով արգելվում եր։ Ավելի քիչ եյին ծեծում, վոչ այնքան աշկարա, բայց և այնպես ծեծում եյին։ Ճիշտ ե, բողոքելու տեղ կար, կարելի յեր ծեծողի դատաստանը տեսնել և նույնիսկ բաժանվել նրանից։ Բայց ով արամագրություն ուներ սկանդալ բարձրացնել։ Ամուսնուցդ, ավելի ճիշտ՝ նրա տնտեսությունից հեռանալու տեղ չունես, մենակ կնոջ համար դժվար եր առանց տղամարդու տնտեսություն վարել։ Տնտեսությունն ստիպում եր համբերել ամեն ինչի, այդ թվում նաև ծեծի։

Իսկ հիմա, ուր ե կորել հիմա կնոջ ծեծելու սովորությունը։ Կար այդպիսի սովորություն, բայց ել չկա։ Աղոթեն յերեք տարի մենք չենք իմացել այնպիսի գեպք, վոր վորեւ տեղ մարդը կնոջը խփի։ Ամուսինները շատ ավելի քաղաքավարի յեն դարձել։ Կինն ինքն ել աշխոր և վաստակում, ինքն ել այդ աշխորի դիմաց յեկամուտ և ստանում։ Տնտեսապես, յեթե ասենք, վոչ թե կինն ե ամուսնուց կախված, այլ ավելի շուտ՝ ամուսինը կնոջից, վորովհետեւ նա կարիք ունի, վոր կինը նրա շորերը լվանա և կարկատի։ Ել բնչպես նա համարձակվի խփել նրան։ Զե՞ վոր կինը կթքի նրա վրա և կհեռանա։ Նրանց այժմ իրար ե կապում վոչ թե տաժանակիր տնտեսությունը, այլ համատեղ ընտանեկան կյանքը և յերեխանները։ Այն ել պետք ե ասել, վոր յերեխաններն ավելի շատ մորից են կախված։ Յեթե մայրն աշխատում ե բրիգադում, ապա յերեխանները պահվում են մանկամասուրներում և մանկահրապարակ-

ներում։ Կինը նիմա բոլոր գծերով միանգամայն ինքնուրույն մարդ է։

Մի գուցե, ընկ. Ստալին, այս մեր կանանց խընդիրները Զեզ մանրուքներ թվան, բայց դրանցից եր գոյացել մեր դառն վիճակը։ Մենք բոլորս դեռ հիշում ենք այդ վիճակը, չենք մոռացել։

ՀԻՄՍ. ՄԵՐ ԱԶՔԵՐԸ ԲԱՑՎԵԼ ԵՆ

Մենք չենք մոռացել նաև այն, վոր կանայք մեծ մասամբ հաճախ գեմ եյին կոլտնտեսություններին։ Մենք չեյինք հասկանում, թե ուր ե մեզ առաջնորդում կուսակցությունը և դեպի ուր ե մղում։ Ինչ մեղքներս թափցնենք, տղամարդկանց ավելի հեշտ եր համոզել կոլտնտեսությունների համար, քան կանանց։

Իհարկե, այն ժամանակ ել կանանց մեջ ակտիվստներ կային, վորոնք զնում եյին առաջին շարքերում։ Հենց որինակ՝ Գույենիո Նաստասյան, Պաւորվա Յեվդոկիան, Շոլիստվա Կատերինան։ Նրանք կոլեկտիվացման ժամանակ իրքև կարմիր հարսնախոս շրջադայում եյին մեր ստանիցայում և ազիտացիա մղում կոլտնտեսության օգտին։ Պատահում եր, վոր տղամարդուն համոզում եյին, իսկ կինը համառում եր։ «Այ քեզ քան, — ասում եր Գույենիոն, — այդ ինչ ե, գարշելի կինարմատ, բարիքիցդ ես փախչում։ «Չեմ ուզում, — պատասխանում եր նա, — մեկ վերմակի տակ քնել կոլտնտեսությունում և մեկ ամանից ճաշ ուտել։ Մի գուցե ինձ խմորեղեն ե դուր գալիս, իսկ կոլտնտեսությունում մենակ բորշ ե լինում»։

Այդ կուլակներն եյին այն ժամանակ այդպիսի ազիտացիա մղում, թե կոլտնտեսությունում բոլորը մեկ ամանից ճաշ կուտեն և մեկ վերմակի տակ կպառկեն, վերմակն ել 70 արշին ե։ Ուղղակի հիմարություն եր, բայց և այնպես շատերն եյին կրկնում։ Պատահում եր, վոր Գույենիոն թքում եր և հեռանում։ Հետո ելի ու ելի յեր համոզում։ Այնուամենայնիվ կուլակներին չաեցինք և կոլտնտեսություն մտանք։

Բայց կոլտնտեսություն մտնելուց հետո ել իսկույն չակսեցինք ազնվորեն աշխատել, այլ դեռ ու գեն եյինք նայում և ականջ զնում կուլակների փափրսութին։ Բեկումը շատ ուժեղ եր, մեկ անգամից չվարժվեցինք։ Յեզ դարձյալ կինն եր, վորնախ հետեւց եր գնում։ Աշխատանքի չեյինք գնում և ընդհանրապես լավ չեյինք աշխատում։ Բայց և այնպես մեր կոլտնտեսությունները հետզհետե ամրացան, և մենք ավելի ու ավելի համոզվեցինք, վոր կոլտնտեսությունում ավելի լավ ե ապրել և աշխատել։

Թշնամին այդ ժամանակ նույնպես քնած չեր։ Տեսնելով, վոր կոլտնտեսություններն ամրանում են, վոր կործանվում ե ամեն ինչ դեպի հինը շուռ տալու կուլակային մտադրությունը, նրանք վորոշեցին կոլտնտեսությունների դեմ ներսից պայքարել։ Սարուաժ կազմակերպեցին, վորի մասին գիտե ամբողջ յերկիրը։ Կուլակները և կոլտնտեսությունների վատ զեկավարները մեր անփութության շնորհիվ անցյալ տարի դանդաղեցրին հացամթերումը, ահազին կորուստներ թույլ տվինք բերքահավաքի ժամանակ, իսկ շատերին մղեցինք դեպի գողություն և հափշտակություն։ Այդպես ել քաշ տվինք բերքի մեծ մասը։ Բայց այդ սարուաժը հենց կուլակների գլխին շուռ յեկավ։

Մենք տեսանք, թե բանն ուր և գնում, զոր այդպես շարունակելով քը բախտության դուռը կհամունք, և ուշի յեկանք։ Սկսեցինք պոկտել կուլտհային արժաները կողանտեսություններից և ստանիցաներից, կուսակցությունը մեղ ոգնեց թարմացնելու ղեկավարությունը, ծփդ տվինք կարգապահությունը։

Զմունը մեղ մոտ քաղբաժին յեկավ։ Յեվ այդ ժամանակ միայն մենք տեսանք, թե ինչ բան և կողանտեսությունների իսկական ղեկավարությունը։ Առաջին հերթին քաղբաժինը սիրու տվեց և բարձրացրեց առաջավորներին, հարգածայիններին և ակտիվիտաներին։ Յուրաքանչյուրի հետ առանձին խոսակցություն ունեցավ, լսեց յուրաքանչյուրի թագուն միտքը և սերտորեն համախմբեց բոլոր ազնիվ կողանտեսականներին։

Քաղբաժինը մեծ աշխատանք տարավ կանանց մեջ։ Մենք ունենք քաղբաժնի մի կին-աշխատող՝ ընկ. Յերմակրվա Պոլինա Մակսիմովա, հոգի կին ե։ Նա կարողացավ արթնացնել կողտնտեսության բոլոր կանանց և տանելիր հետևից։ Կանայք այժմ պատճառ տեղ են գրավել մեր կոլտնտեսություններում։ Բավական և ասել, զոր 350 պարզեատրված հարգածայիններից 150-ը տղամարդիկ են և 200-ը կանայք։ Այդ բոլոր հարգածայինները չեն, այլ միայն լավագույններից լավագույնները։ Նրանք աշխատանքի տիպարներ են ցույց տվել արտազրության մեջ, նաև ակտիվիստ հասարակական աշխատողներ են։ Նրանց մեջ, ուրեմն, կեսից ավելին կանայք են։ Մեզ մոտ կանայք մեծմասնակցություն են ունենում կողտնտեսության բոլոր գործերում։ Այժմ մեզ մոտ կան արակտորիստ կանայք, կոմբայնավար կանայք, այն ել վոչ թե վատ,

այլ լավ կոմբայնավարներ մեր ստանիցայի տղջիկներից, ինչպես, որինակ, Ձեռնիկովա Աննան և Կուլցյաւեվա Մարիան։ Կան բրիգադիր, հաշվեառ, վարչության անդամ կանայք։

Ամենուրեք կանայք զուլս են հանում տղամարդկանց հետ համահավասար կամ նրանցից ել լավ։ Կողտնտեսությունում չկա այնպիսի մի աշխատանք, կողտնտեսություն ղեկավարելուց սկսած մինչև հերկանելլ, չկա այնպիսի աշխատանք, զորը կինը չկարողանա զուլս հանել։

Ի՞նչպես հիշես այն ժամանակների, յերբ կանայք չկիտեյին, թե վորտեղ ե զոնվում ստանիցայի վարչության զուլոր, վախենում եյին մոտենալ ստանիցայի ատամանին։ Միթե կինն այն ժամանակ հետաքրքրվում եր հասարակական գործերով։ «ՈՉախից մինչև տան շեմքը, այդ ե կնկա ճանապարհ», — ասում ե հին առածը։ Այդպես ել եր։ Կինարմատը զիտեր միայն անտառունները, ամանները, խանձարուը և տնտեսության տաժանակիր աշխատանքը։ Գիտեր նաև յեկեղեցու ճանապարհը, ամուսնու ծեծերը և կեսրոջ հայոցանքը։ Կողտնտեսության գալուստով այդ ժամանակները կորան անվերադարձ կերպով։ Այժմ կինը թափանցում ե վոչ միայն կողտնտեսական, այլև պետական գործերի մեջ։ Կինը տղամարդու հետ համահավասար կանգնում ե իշխանության զուլսը։ Մեզ մոտ 2 զյուղիսորհուրդ կա։ Գյուղխորհի 58 անդամներից 26-ը կանայք են։ 5 կողտնտեսուհի գյուղիսորհուրդների նախագահության անդամ են, իսկ Առողյարովա Յեփոկիան շրջորդկոմի նախագահության անդամ ե։

Ահա թե յերբ զյուղում իրավործվեցին մեր մեծ

ուսուցիչ Վլադիմիր Իվիչ Լենինի այն խոսքերը, թե  
յուրաքանչյուր խոհարարուհի կկարողանա պետու-  
թյուն կառավիրու:

Կոլտնտեսուհի կանայք այժմ պակաս գրագետ  
չեն տղամարդկանցից: Ա՛յ, որինակ, Յեվգենիա Պա-  
կովան գրագետ ե, իսկ ամուսինը, Պյոտր Պաշկովը  
անզրագետ: Առաջ այդպես չեր լինում: Առաջ, պա-  
տահում եր, դժվար եր զյուղում գրագետ կին ճարել,  
իսկ այժմ արդեն դժվար թե անզրագետ կին ճարվի:  
Մեր գրագիտությունը թեև այնքան ել մեծ չե,  
բայց և այնպես տղամարդկանցից վատ չենք կա-  
րողանում գրել ու կարդալ: Ել չենք խոսում ջա-  
ճեների մասին: Զահելների համար ուզած ուսմուն-  
քի ճանապարհը բաց ե թե դպրոցներում, թե տեխ-  
նիկումներում, թե համալսարաններում: Հիմա բո-  
լոր յերեխաներն են սովորում, իսկ առաջ միայն մի  
քանի աղջիկ եյին դպրոց գնում, իսկ մեծ մասն  
անզրագետ եր մնում ամբողջ կյանքում:

Այս բոլորից հետո Բնչպես չկպչենք կոլտնտե-  
սությունից: Մենք, ընկ. Ստալին, հիշում ենք Ձեր խոս-  
քերը և աչքի լույսի պես ենք պահում կոլտնտեսու-  
թյունը: Այժմ արդեն մենք հասկացել ենք, թե ո՞ւ են  
տանում մեզ կոլտնտեսությունները յեվ ի՞նչ են նեանակում  
մեզ համար:

Դուք, ընկ. Ստալին, բարձր եք կանոնած, հետուն  
եք տեսնում: Դուք մեզնից առաջ գիտեցիք, վոր կոլ-  
տնտեսություններն ուրախ կյանք կտան աշխատա-  
վոր գյուղացիությանը և ամենից առաջ կնոջ՝ գեղջ-  
կուհուն: Մենք այդ մեկ անգամից չհասկացանք,  
բայց կուսակցությունը հաստատուն ձեռքով մեդ  
դեպի ճիշտ ճանապարհն առաջնորդեց: Այժմ ար-

դեն աեր այները բացված են աշխարհի վրա: Դյան համար  
Ձեզ, մեծ կուսակցության առաջնորդիդ, մենք հզում  
ենք մեր կոլտնտեսական շնորհակալությունը:

Ա.Յ ՏԱՐԻ ՄԵԶ ՄՈՑ ԱՄԵՆ ՀԱՅՈՒՄ

ԲԵԿՈՒՄ ԿԱ. ԴԵՊԻ ԼԱՎԸ

Իսկ այժմ լսեցեք, թե ինչ ձեռք բերինք մենք  
այս տարի: Միք մոռանա, ընկ. Ստալին, վոր անցյալ  
տարին մեզ համար ծանր տարի յեր, վոր ձմեռը մի-  
այն քաղաքամի գարով մենք վերացրինք կուլակացին  
սարուաժը և լոդրերին ստիպեցինք աշխատեք:

Մենք այս տարի հաջափեցինք 16,705 հեկտար  
գանգան կուտուրաների բերքը: Զի կարեփ ասել,  
թե բերքը շատ բարձր եր; բայց և այնպես շատ բարձր  
եր անցյալ տարվանից: Համեմատել անգամ չի կա-  
րեփ: Մեր հողը նույն եր, միջոցներն ենույնը, բար-  
շող ուժը նույնիսկ քիչ եր անցյալ տարվանից, բայց  
փոխվել եր մեր աշխատանքը, յեզ իսկույն փոխվեց բեր-  
քը: Անցյալ տարի մենք պետությանը հանձնեցինք  
23,700 ցենտներ հացահատիկ, իսկ այս տարի՝  
56,618 ցենտներ: Անցյալ տարի մեզ աշխարին ըն-  
կավ մի կոլտնտեսությունում 2, մյուսում 1 կիլո:  
Գետությունը միքանի կոլտնտեսությունների ոգնեց  
սերմացուով, անամսակերով և նույնիսկ պարենով:  
Այժմ մենք սերմացուով և անամսակերով լիովին ա-  
պահովված ենք, և մեկ աշխարին ընկնում և 5 կիլո ու  
100 գրամ: Սունձին կոլտնտեսություններում աշխա-  
րին 5 կիլոյից շատ ավելի յե ընկնում: «Պորեգա» կոլ-  
տնտեսությունը, որինակի համար, աշխարին տալիս է  
6 կիլո, կալինինի անվան կոլտնտեսությունը՝ նույն-  
պես 6 կիլո, «Շիրոկի պուտ»-ը՝ 7 կիլո, «Զուղելի» կոլ-  
տնտեսությունը՝ 7, 7 կիլո, «Սորեխովանիե»-ն՝ 11 կիլո:

Ինչպես տեսնում եք, մեր ՄՏԿ-ի վոչ բոլոր կոլ-  
տնտեսություններն են միատեսակ ստանում։ Վոչ  
բոլորն են միատեսակ աշխատել, վոչ բոլորին և մի-  
ատեսակ բերք/յակել։ Բայց ինչքան ենք մենք առաջ  
գնացել անցյալ տարվանից, յերբ ստիպված ենքնք  
պարենային վարկ ստանալ պետությունից։ Յերեք  
անգամ ավելի հաց հանձնեցինք մենք պետուրյանը յեզ  
նինք անգամ ավելի յենք ստանամ աշխարհ դիմաց։

Բայց և այնպես մեր կոլտնտեսությունները  
չպետք ե պարծենան, կարելի յեր շատ ավելի բերք հա-  
վաքել, ուրեմն և շատ ավելի յեկամուտ ստանալ։ Ա-  
հա Զեղայսպիսի մի փաստ։ աշնանացան ցորենի մի-  
քանի հողամասեր տվին հեկտարից 20 ցենտներ բերք,  
իսկ վոմանք ել 6, 3 և 2 ցենտներ։ Ինչո՞ւ այդպիսի  
մեծ տարրերություն։ Առաջ կասեյին, թե աստված  
տվեց, իսկ հիմա լավ գիտենք, թե ինչու։ «Կովկաս»  
կոլտնտեսությունում, որինակի համար, աշնանա-  
ցան ցորենը, վորը կոլտնտեսությունը ցանել եր  
հոկտեմբերի 16-ին, տվեց հեկտարին 19 ցենտներ,  
իսկ այն, վոր ցանվել եր նոյեմբերի 15-ին, տվեց  
միայն 3 ցենտներ։ Ահա թե վերտեղ ե հիմնական  
պատճառը։ Ուշահնանացանք մեր կողմերում բացար-  
ձակ կորուստ ե հացի համար։

Ի՞նչ կլիներ, յեթե մենք ամբողջ ցորենը ցանելինք  
մինչև հոկտեմբերի 16-ը և լավ մշակեյինք հողը։  
Մենք հացով կցնեյինք բոլոր ամբարները։ Այժմ կոլ-  
տնտեսականներն ափսոսում են անցյալ տարի լո-  
ղացին աշխատանք կատարած լինելու համար, բայց  
անցածն անցած ե։ Դրա վոխարեն մենք ուրախու-  
թյամբ կարող ենք Զեղ հաղորդել, վոր այս տարի  
մենք աշնանացանը վերջացրինք հոկտեմբերի 10-ին,

անցյալ տարվանից մեկ ու կես ամիս առաջ։ Յանք-  
սի վորակը շատ բարձր ե, և մենք ցանել ենք ար-  
դեն վոչ թե 5 հազար, այլ 8 և կես հազար հեկտար։  
Յանքսն արդեն պատվել ե կանաչով, աչքը հրճվում  
և նրանց վրա նայելիս։

Մենք այս տարի կալմն ավարտեցինք ոգոստո-  
սի 25-ին, իսկ անցյալ տարի կալմում և վերակալմում  
ենքնք մինչև ուշ ձմեռը։ Այսպես, ամեն ինչում, ինչ  
վոր վերցնես, զգացվում ե տարրերությունը։

Վերցնենք թեկուզ կալմիչները։ Այս ամռանն  
ստիպված յեղանք կալմիչների մեքենավարներ փրնտ-  
ուել և կալմիչները նորոգել։ Ինց աշխատանքն սկսելուց  
առաջ, իսկ հիմա կալմը վերջացնելուն պես գործի  
անցանք։ Կալմիչներն հիմա արդեն պատրաստ են,  
թեկուզ վաղն իսկ սկսիր կալմել։ Այս տարի արդեն  
մեզ մոտ ամեն ինչում բեկում կա գեպի լավը, իսկ  
յեկող տարի ել ավելի առաջ կգնանք։

Կոլտնտեսություններից զվարակոր ոգուտը հենց  
այն ե, ինչպես մենք նկատեցինք, վոր կոլտնտեսու-  
թյունում կարելի յե շատ արագորեն զարգացնել  
տնտեսությունը և բարելավել մեր զրությունը։ Դա  
անհատական տնտեսություն չե, վորտեղ ամբողջ  
կյանքում ճանկում եսքո հողի կտորը և միշտ ել աղ-  
քատ ես ապրում։ Կոլտնտեսությունում յուրաքան-  
չյուր նոր ջանք ահազին ոգուտ ե բերում, նոր ա-  
ռաջնադացում ե տալիս։ Կոլտնտեսությունում  
մի 2—3 տարում մենք կկարողանանք այնպիսի հա-  
րբածություն ծավալել, վորը վոչ վոք յերեք չի յե-  
րազնել։ Դրանից ե, վոր աշխատանքն այնքան ուրա-  
խալի յե կոլտնտեսությունում, վոր վոչ միայն աժ յմ  
արդեն ավելի մեծ յեկամուտ ե տալիս, քան մենակ

աշխատելը, այսի, վոր ամենից պիտի ուրն է, նա ա-  
մենամոտիկ ապագայում ահազին յեկամուտ է խոս-  
տանում մեղ կ մեր ամբողջ պետության համար:

Դուք ասացիք, ընկ. Ստաֆի, վոր առաջիկա 2—3  
տարում բոլոր կոլտնտեսականները նոր աստիճանի  
վրա կրաքրանան և ունեոր կղառնան: Ճիշտ է,  
արդեն ունեոր են դառնում, բայց զրա վրա մենք  
կանգ չենք տոնի: Ավելի առաջ կդնանք: Վերջ չի  
լինի մեր աճմանը: Ավելի ու ավելի կենսուրախ և  
հարուստ կդառնա կյանքը: Այդ այժմ արդեն յերե-  
փում է: Մեր հողն ամենաբեղմնավոր հողն է, բայց  
նրա տերերը վատ եյին: Հիմա միայն նա գտնը-  
վում է իսկական տիրոջ ձեռքին, հիմա միայն մեր  
հողն սկսում է ծնել ինչպես վոր հարկն է: Մենք բա-  
զաքին ավելի շատ հաց և մթերք կտանք, մենք քա-  
զաքից կստանանք մեքենաներ և տեխնիկա, մենք մեր  
յերկիրը ծաղկազարդ պարտեղ կդարձնենք: Կենսու-  
րախ կյանք կինի աշխատավոր ժողովրդի համար:

ՄԵԿ-ՅԵՐԿՈՒ ՏԱՐՈՒՑ

ՄԵՐ ԳՅՈՒՂԵՐԸ ՃԱՆԱՋԵԼ, ԶԻ ԼԻՆԻ

Թե ինչ կարող է անել կոլտնտեսությունը նույն-  
իսկիր սեփական ուժերով, այդյերևում է այսպիսի մի  
վոչ-մեծ փաստից: Մեր գյուղի կողքով հոսում է մի  
փոքրիկ կեղտոտ գետակ՝ Կուրա: Նրանից վոչ մի ո-  
գուտ չկա, իսկ վնասը վիթխարի յե: Նրա ճահճուտ  
ափերին բազմանում են մալարիայի մոծակները և  
տենդ են սփռում գյուղերում: Հարյուր տարի գոյու-  
թյուն ունի մեր գյուղը, և այդ կեղտոտ գետակի հետ  
վոչինչ չեն կարողացել անել: Իսկ հիմա մեր քաղ-  
բաժնի պետը շատ հասարակ պլան է առաջարկում—

միքանի տեղով թումբ կապել և գետակային լճեր  
ստեղծել: Այն ժամանակ ճահճուտ ափերը կծածկվեն,  
կանհետանան մոծակները, նրանց հետ ել մալարիան:  
Իսկ լճերում ծուկ կրազմացնենք: Բայց այդ քիչ եւ:  
Ամբարտակների վրա կարելի յե փոքրիկ ելեկտրո-  
կայաններ սարքել: Կլուսափորենք մեր բոլոր գյու-  
ղերը և գլուխ կրերենք ելեկտրական կալար: Յեթե բո-  
լոր աշխատանքները կատարենք կոլտնտեսության  
ուժերով, ապա, ելեկտրոկայանների մեքենաներից  
բացի, շատ եժան կնստի, և այդ ամենն այնքան ել  
դժվար չի լինի անել: Յեկ կանենք: Միանամուռ ուժե-  
րով ամեն ինչ կարելի յե անել:

Մենք հիմա արդեն ելեկտրական լույս ունենք:  
Սովետակայա ստանիցայում վերջերս ելեկտրոկայան  
հիմնվեց: Նրանով ե աշխատում կինոն, լուսափոր-  
ված են փողոցները և 30 կոլտնտեսականի բնակա-  
րանները: Իսկ նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան հե-  
րանները: Իսկ պատության տարեղարձին, ելեկտրականությունը  
կանցկացվի ելի 100 բնակարանում, առաջին հեր-  
թին առաջավոր հարվածայինների բնակարաններում:  
Կանցնի մեկ-յերկու տարի, և մեր գյուղերը ճանա-  
չել չի լինի:

Այդպիսիք են մեր հաջողությունները և մոտիկ  
ապագայի հնարավորությունները: Իհարկե, մենք  
լավ ենք հասկանում, վոր մեղ մոտ դժվարություններ  
կեռ կինեն: Դում միշտ եմ ասել, վոր լավ կյանքը  
հետաքարտ ձեռք չի բերմի: Բայց ամենադժվարն այ-  
նուամենայնիվ անցե՞ւ: Այս ենադժվարն եր՝ ճիշտ  
կազմակերպել աշխատանքը, կոլտնտեսություննե-  
րում, խիստ աշխատանքային հարգապահություն  
սահմանել և բոլոր առաջնային ազնվորեն աշխա-



տել: Այդ մեր կոլտնտեսություններում ձեռք ե  
բերված արդեն: Մենք չենք ասում, թե այլևս լոդ-  
րեր չեն լինի, թե արդեն բոլորն ել լիովին գիտակից  
են դարձել: Հին սովորությունների քուը մեկ անգամից  
չի սրբի: Պատահում ե փոր մաքրում ես, նորից  
ե ծլում, և հարկավոր ե լինում նորից ու նորից  
մաքրել, մինչև փոր վերջնականապես չըռւժվեն  
ստրկական ունակություններից: Այնպես փոր դեռ  
հարկավոր կինի պայքարել լողերի դեմ: Բայց մենք  
ասում ենք, փոր մեր կոլտնտեսություններում ար-  
դեն ներողամտություն չկա լողերի նկատմամբ:  
Մենք նրանց յերես չենք տալիս: Չես աշխատի-  
չես ուտի, իսկ վատ կաշխատես—վատ կուտես և  
ընդհանուրի արհամարհանքին կարժանանաս:

Կոլտնտեսությունում հարգանք ու պատիվ ե վա-  
յելում միայն նա, ով շատ աժամա ունի, այսինքն նա,  
ով ազնվորեն և աշխատում յեվ կոլտնտեսության ոգուն  
և բերում: Այժմ մինչև իսկ յերբ յերիտասարդն ամուս-  
նանում ե, զրասենյակից տեղեկանում ե, թե հարս-  
նացուն շատ աշխոր ունի՝ արդյոք, կամ վեսացուն  
հարվածային ե:

Կազմակերպված աղնիվ աշխատանք կոլտնտե-  
սությունում,—ահա զիսավորը, վորին մենք հասել  
ենք: Յեզ թեև մեզ մոտ գեռ շատ բան պակաս ե, գեռ  
ճոխ չենք ապրում, բայց այդ ամենը ձեռք բերած  
բան ե, այն ամենն, ինչ հարկավոր ե, մենք այժմ  
ձեռք կբերենք:

Դեռ չի հանգստանում նաև դասակարգային թշշ-  
նամին: Հարկավոր ե արթուն լինել: Դեռ ամեն կեղ-  
տոտություն կարելի յեւ սպասել նրանից: Ինչքան ել  
աշխատեցին, ինչպես ել շուր յեկան կուլակները,

բայց նրանց ուղածի պես չեղափ: Դուքս չեկափ,  
խփեցինք նրանց: Նրանք կոլտնտեսությունների գեմ  
ազիտացիա եյին մզում և ամեն տեսակ զբարառու-  
թյուն ու բամբասանք տարածում: Զբեցինք նրանց:  
Մենք կոլտնտեսություններ ունեցանք: Նրանք ել  
խցկեցին կոլտնտեսությունները, ամեն կերպ վնա-  
սեցին, անասուններին փոչնչացրին, տրակտորներն  
ու մեքենաները փչացրին, բայց այդտեղ ել նրանց  
մերկացրինք և գուրս վմզեցինք: Այս տարի գար-  
նանն ու ամռանը նրանք փափառմ եյին, թե զուր  
եք իբր աշխատում, միննույնն ե բան չեք ստանա,  
շուն ու գելի բաժին կդառնա: Այդտեղ ել նրանց ա-  
սածի պես չեղափ: Խեպի նինը վերադարձ չկա: Գետերը  
ներ չեն դառնա: Կուլակները նին կյանքը ցն տեսնի:

ԼՍԵՑԵ՞Ք, ԸՆԿ. ԱՏԱԼԻՆ,  
ՄԵՐ ՄԻՔԱՆԻ ԿԱՐԵՒԲՆԵՐՆ ՈՒ ՊՈՀԱՆՁՆԵՐԸ

Այնուամենայնիվ մենք գտնում ենք, փոր դեռ բա-  
վարար ուշագրություն չի դարձվում կանանց: Այնու-  
ամենայնիվ դեռ ավելի շատ տղամարդկանց են  
զեկավար աշխատանքի առաջքաշում, իսկ կոլտնտե-  
սուհուն նայում են այնպես, թե նա տակավին  
հետամնաց ե: Մենք ունենք ատամնմեկ կոլտնտեսու-  
թյուն, և մինչև այժմ վոչ մի կոլտնտեսության  
կին նախագահ չկա: Յեթե բոլոր նախագահներն ել  
գործարար մարդիկ լինեյին, ելի չեցինք բողոքի.  
տղամարդ թե կին՝ միննույնն ե, միայն թե աշխա-  
տանքը լավ գնա: Բայց մեզ մոտ թույլ նախագահ-  
ներ ել կան: «Պոբեդա» կոլտնտեսությունում, որի-  
նակի համար, նախագահը բանի պետք չեր: Հանեցին  
նրան, ուրիշի ընտրեցին, ելի գործի մարդ դուրս

Հեկափ: Մենք գտնում ենք, վոր պետք եր կի՞ն առաջքաշել: Շատ բըմբազիր կանայք գործով ցույց են տվել, վոր բըմբազը տղամարդկանցից լավ են վարում: Հենց նրանց ել պետք են ախագահ դարձնել:

Մենք Ձեզ խնդրում ենք, ընկ. Ստալին, ողնել կանանց առաջքաշմանը: Ասացեք մեր կառավարությանը և ընկ. Կալինինին, թող վորոշում ընդունեն, վորովհետեւ դեռ շատ կոտնտեսություններում ճշնշում են կանանց:

Իհարկե, մենք պետք են շատ սովորենք, վորպեսզի կարողանանք լավ կառավարել մեծ տնտեսությունը: Յեվ մենք ուզում ենք այս ամբողջ ձմեռը նվիրել սովորելուն: Կոսվորենք ընդհանուր գրագիտություն, և քաղցրագիտություն, և ազգուտեխնիկա: Ավելի շատ զիրք, ավելի շատ տետրակ տվեք մեզ, վորովհետեւ ուսման ծարավը կանանց մեջ շատ մեծ ե: Այ, որինակ, մեր ակտիվիստ Գոլովենչենկո Ֆեկլան. շուտով նրա հիսուն տարին կըրանա, բայց նա ել հաճույքով սկսել ե սովորել: «Առանց լավ գրագիտության, — ասում են նա, — չեմ կարողանա բըմբադ դեկավարել»: Այդպես են ասում բոլորը, թե ջահելները և թե պառավերը: Հենց վոր մոտեցանք հասարակական կյանքն ու տնտեսությունը կառավարելու գործին, կրթությունը մեզ համար վոչ թե պերճանք դարձափ, այլ անհրաժեշտ պահանջ, ինչպես ջուրը ծարավի համար:

Դուք, ընկ. Ստալին, լավ մտածեցիր քաղցրաժինների մասին: Նրանք յեկան մեր ստանիցան՝ ել վորտեղից ասես, ամեն ինչում ոգնում են մեզ և սովորեցնում: Հարկավոր եքաղաքից ավելի շատ գրագետ մարդիկ պյուղ ուղարկել: Լավ կլիներ նաև կոլ-

տնտեսուհիներին եքսկուրսիա ուղարկել, վոր նրանք ավելի շատ տեսնեն մեր գիգանտ գործարանները:

Հետո մենք ուզում ենք, ընկ. Ստալին, Ձեր առաջներ մեր միքանի կարիքներն ու պահանջները: Առաջինը հետեւյալն ե:

Մենք մեր ստանիցաներից գուլս արինք կուլակներին, վորոնք մնասում և քանդում եյին կոլտնտեսային շինարարությունը, և ինչ ենք տեսնում: Նրանցից միքանիսը ժամանակից շուտ ստանիցաներն են վերադարձել և նորից սկսել իրենց կործանիչ աշխատանքը: Անցյալ տարվա կուլակային սաբուտաժում մենք քիչ չնկատեցինք այդպիսի վերադարձների: Մենք պահանջում ենք, վոր կուլակներին թույլ չտան գալու, մինչև վոր նրանք ուղղվեն և գիտակցեն, վոր դեպի հինը վերադարձ չկա: Վորպեսզի նրանք չգան քանդելու մեր կոլտնտեսային շինարարությունը: Այդ մեր առաջին պահանջըն ե:

Յերկրորդ՝ արդյունաբերական ապրանքների վերաբերյալ: Կարիք չկա ասելու, վոր հիմա ապրանքը շատացել ե: Մեր կոռպերատիվումն ել գարակները լեցված են: Բայց գժրախտությունն այն ե, վոր ապրանքները վոչ միշտ հարմար են: Ապրանք շատ ե, իսկ յերբեմն ջոկելու բան չկա, մեր ճաշակով չի: Իսկ ամենազիստը՝ վորակը վատ ե: Մեզ արդեն չեն բավարարում մահուզը, ինչ-վոր չիթը կամ ինչ-վոր կոշիկներ կամ, ասենք, կիսաշալեր. մենք ուզում ենք, վոր լավը լինի, բարձր վորակի: Զիթ ե, ուրեմն իսկական չիթ լինի, շալ ե՝ իսկական շալ: Կոշիկ՝ իսկական կոշիկ, վոր մարդու սիրտը հրճիփի: Մենք ինքներս այժմ շատ ենք պլուս ջարդում

վորակի համար: Իհարկե, մենք դեռ պարտք ենք  
բանվորներին: Մենք պետք եւ ավելի շատ հաց, յուղ,  
միս և ամեն տեսակայլ մթերքներ տանք: Մենք կա-  
վելացնենք և կապացնենք կրտնտեսային արտա-  
դրանքը, բայց թող գործարաններն ել բարձր գո-  
րակի ապրանք արտադրեն: Ցածր գորակից վոչ փոք-  
ոգուտ չկա: Չե վոր մեր գործարանները կարող են  
լավ տրակտորներ, հիանալի ավտոմոբիլներ շինել: Մեզ մոտ աշխատում են Ստալինգրադի գործարա-  
նի տրակտորները և Ստալինի անվան գործարանի  
ավտոմոբիլները, լավ են աշխատում, այնպես, վոր  
քեֆդ գա: Խսկ միթե մեր գործարանները մոռացել  
են լավ չիթ, ամուր կիսակոշիկներ կամ մաքուր,  
անխորան բաժակներ պատրաստել:

Յեվ հատկապես սապոնի մասին։ Զի բավականացնում, ընկ. Ստալին։ Գյուղը ներկայում շատ ավելի սապոն ե գործածում, քան առաջ։ Մենք ուզում ենք ապրել մաքուր, կուտուրական կյանքով։ Թող մեր գործարաններն ավելի շատ պատրաստեն լավ սապոն, մանափանդ լվացվելու անուշահոտ սապոն։ Ամենից շատ լվացվելու սապոնն ե պակասում։

Վերջապես, մեր յերբորդ պահանջը փոսի մասին եւ Դեռ վատ եւ աշխատում փոստը մեզ մոտ, շատ դանդաղ տեմպով։ Նրան պետք է ձիգ տալ համամիութենական մասշտաբով, փորպեսզի թերթերը և նամակները չուշանան։ Մեր ստանիցան 35 կիլոմետր հեռու յեւ յերկաթուղուց խոկ թերթերը մեզ համառում են հինգերորդ, վեցերորդ որը։ Այդ՝ լավ ճանապարհ լինելու դեպքում։ Իսչի՞ նման եւ դա թերթերը չպետք է ուշանան։ Մենք, կանայքս, շատ ենք հետաքրքրվում թերթերով, փորովնետեւ ուզում

ենք իմանալ վոչ միայն մեր կողմատեսությունների գործերի մասին, այլև այն մասին, ինչ կատարվում է ամբողջ յերկրում, ամբողջ աշխարհում:

Այ, մենք թերթում կարդացինք և ժողովներում  
լսեցինք, վոր Գերմանիայում այժմ իշխանության  
պուլի կանգնած ֆաշիստները ձգտում են աշխատա-  
վոր կոոչը վերադարձնել խոհանոց, դեպի ամաններն  
ու խանձարուրը, վորպեսզի նա այլևս փոխչով չհետա-  
քըրքը լի: Այդ մեզ տարրինակ թվաց: Վոնց վոր կու-  
տուրական ազգ ե, իսկ կոոչն ուզում են պահել խա-  
վարի և ստրկության մեջ: Մենք կարծում ենք, վոր  
այդ նրանց չի հաջողվի, ինչպես մեր կուլակներին:  
Ֆաշիստներին կփոխչացնի աշխատավորությունը:

ԽՈՐՆ Ե ՀԵՐԿԵԼ, ՄԵՐ ԿՅԱՆՔԸ  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՒԹԱՆՔ

Իսկ մենք այժմ, ընկ. Ստալին, պլան ենք գծում,  
թե ինչպես ավելի մեծ չափով կոլտնտեսուհուն ազա-  
տագրենք ծանր կենցաղից, ինչպես հեշտացնենք մեր  
ծանր կյանքը, վոր ել ավելի խորամուխ լինենք հա-  
սարակական գործի և արտադրության մեջ:

Մենք ունենք արդեն մանկամտուրներ, ունենք  
նաև մանկահրապարակներ: Ամբողջ գարունն ու  
մայր մեր յերեխաները, կրծքի յերեխաներից մին-  
չեւ 14 տարեկանները, պահպել և դաստիարակվել են  
մտուրներում ու մանկահրապարակներում: Կրծքի  
յերեխաների համար մտուրները կազմակերպվել են  
դաշտերում, փորտեղ աշխատում եյին մայրերը:  
Այժմ մտածում ենք, թե ինչպես ամրացնենք և  
լավացնենք այս գործը: Հարկավոր է մանկական  
հիմնարկները դարձնել որինակելի, փորպեսզի յերե-

խաների համար այստեղ ավելի լավ լինի, քան տանը:  
Կոլտնտեսությունները զբա համար փող չպետք է  
խնայեն: Ամեն ծախքը կհատուցվի, վորովհետև կա-  
նայք ազատ լինելով յերեխաներից, ավելի շատ և  
ավելի լավ կաշխատեն հանրային տնտեսության մեջ:

Այս տարի մենք, իհարկե, դեռ այսքան ուժ չու-  
նենք, վոր մանկական հիմնարկների համար նոր շեն-  
քեր կառուցենք, բայց հենց վոր հարստացանք, կկա-  
ռուցենք և կկահավորենք այն ամենն, ինչ հարկավոր  
ե: Կարծում ենք, վոր այդ հնարավոր կյանի յեկող  
տարի:

Մենք այժմ ուրիշ բան ել ենք պլանավորում—  
նասարակական լվացքաներ: Այդ գործը դեռ բո-  
լորովին նոր ե գյուղում: Բայց նորությունը մեզ չի  
վախեցնում: Անպայման յուրաքանչյուր կոլտնտե-  
սությունում, ավելի ճիշտ՝ յուրաքանչյուր բրիգադում  
պետք է հասարակական լվացքատներ կազմակերպել:  
Յեթ այդ ամեննեին դժվար չե: Ասում են, կան այն-  
պիսի լվացքի մեքենաներ, վորոնք իրենք են ելեկ-  
տրականությամբ սպիտակեղենը լվանում, մզում և  
չորացնում: Եու, մենք առայժմ առանց լվացքի մեքե-  
նաների ել յոլա կգնանք: Ապագայում, իհարկե, մե-  
քենային ել կհասնենք, իսկ առայժմ պահանջվում է  
միայն յերկու վոչ-մեծ կաթսա, միքանի տաշտակ,  
արթուկներ,—և արդեն պատրաստ ե կոլտնտեսային  
լվացքատունը: Միթե դա դժվար է անել:

Մենք այժմ մեր մեջ մեծ ուժ ենք զգում: Մենք մենակ  
չենք, մեզ նես է բանկուրյունը, մեր կողմն է կոմունիս-  
տական կուսակցությունը, մեր կողմն է պետությունը: Ամ-  
բողջ յերկրը մերն ե: Միթե կա աշխարհում այնպիսի  
գործ, որ մենք, աշխատավորներ չկարողանանք անել:

Մոտենում ե Հոկտեմբերյան մեծ հեղափոխու-  
թյան տարեղարձը: 16 տարի արդեն գոյություն-  
ունի խորհրդային իշխանությունը: Շատ ջուր ե  
հոսել այդ տարիների ընթացքում: Խորն ե հերկել մեր  
կյանքը հեղափոխության գութանը: Նրա վրա այլև  
չի աճի կուլակային մոլախոտը: Մենք ամուր կանգ-  
նած ենք սոցիալիստական հողի վրա և համարձակ  
նայում ենք դեպի ապագան: Վաղվա որը պարզ ե  
մեզ համար: Մենք ամբողջապես հավատում ենք  
Զեղ և ամբողջ բոլցիկյան կուսակցությանը: Հաս-  
տատուն ձեռքով մեզ առաջնորդեցեք լենինյան ու-  
ղիով: Այդ ուղին ստուգված է միլիոնավոր մարդ-  
կանց պրակտիկայով: Մենք կգանք Զեր հետեւց,  
առանց հետ նայելու:

Մենք, գյուղական կանայք, վոր ճնշվածներից  
ամենաճնշվածն եյինք ցարական Ռուսաստանում,  
ասում ենք Զեղ—դեպի նես չկա վերադարձ: Յեթե  
դեռ կապիտալիստները մտածում են հարձակվել  
մեզ վրա, ապա թող լավ մտածեն այդ մասին:  
Մենք պատրաստ ենք հանդիպելու անկոչ հյուրերին:  
Մենք մեր ամսախններին, վորդիներին յեկ յեղայրեներին  
Մենք մեր ամսախններին, վորդիներին յեկ յեղայրեներին  
կուլարկենք պատասխելու Խորհրդային յերկրի սահման-  
եները, իսկ տնտեսությունը մի կերպ յուս կտանենք: Յերե-  
սերը, իսկ տնտեսությունը մի կերպ յուս կտանենք: Յերե-

լուսաւագմը, աշխատավոր ժողովրդի յերշանիկ, կենտրուալ-  
իյաները:

Ընդունեցեք, ընկ. Ստալին, մեր ջերմ վողջույ-  
նը: Զեղցանկանում ենք լավ առողջություն և յերկար  
տարիներ: Մեր վողջույնը հաղորդեցեք ընկ. Կազա-  
տարիներ: Մեր վողջույնը հաղորդեցեք ընկ. Կազա-

պես և բարեկցեք Նադեժդա Կոնստանտինովսա  
Կրուպսկայային։

«Սովետսկի պախառ», «Կամիկազ», «Զարյա», «Բոլեսվիկ»,  
«Շիրոկի պուտ», «Պոբեդա», «Մարեվնովանիե», «Զուղելի», «Նովի  
պուտ», Կալինինի անվան կոլտնեառուրյունների և «Պրոլետար-  
սկայա» կոմունայի կոլտնեառուհիների հանձնառարարյամբ՝

ԱՏՈՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀՀ Ազգային գրադարան



NL0977037

ԳԻՆԵ 15 ԿՈՊ.

11  
26686



**ПИСЬМО ТОВ. СТАЛИНУ**  
от колхозниц района деятельности Советской  
МТС, Георгиевского района, на Северном Кав-  
казе.

Партиздан, Эривань, 1933 г.